



# արմենիա

Հ Ա Ր Ա Ք Ա Ք Ե Ր Ք

10 մայիսի 2008 շաբաթ թիվ 14

# տպագիր

www.amedia.am



## Խմբագրական

Մայիսի 9-ը մեզ համար յուրահատուկ խորհուրդ ունի: Մեծ հայրենականում Ստալինգրադով պայմանավորված Թուրքիայից սպասվող վտանգից, մինչև՝ Շուշիի ազատագրում: Հաղթանակի օրը նաև յուրահատուկ կամուրջ է սերունդների համար: Կամուրջ, որն ի ցույց դրեց առաջին հերթին մեզ, ապա եւ ողջ աշխարհին, որ յուրաքանչյուր սերունդ ունի այն ներուժը, հայրենիքի պաշտպանության այն գիտակցումն ու նվիրումը, որը կարող է Հաղթանակներ կերտել: Այսօր նաև ժամանակն է, որ Հաղթանակի լիարժեքության խնդիրն արժեւորվի եւ գիտակցվի: Գիտակցվի նաև, որ Հաղթանակի ամբողջականությունն ու սերունդներին նրա միարժեք եւ վերջնական փոխանցումը դեռեւս ամենօրյա աշխատանքի կարիք ունի:

Այսօր ուշադրության է արժանի է այն փաստը, որ չնայած այն հանգամանքին, որ որիդային դրոշը Ռեյխսբազի վրա ծածանվեց մայիսի 1-ին, բայց Հաղթանակի օր հայտարարվեց մայիսի 9-ը, երբ Գերմանիան ընդունեց իր վերջնական եւ անվերապահ պարտությունը: Հիշատակման է արժանի նաև այն, որ հաղթանակած որիդային Միության ժողովուրդներից եւ ոչ մեկը չունի այսօր կյանքի այն կենսամակարդակը, որն ունի «պարտված» Գերմանիան, կամ նրա դաշնակիցներ Իտալիան, կամ նույնիսկ նույն ճապոնիան: Այս ամենը երբեւէ չի կարող նսեմացնել իր կյանքի գնով Մեծ Հայրենականի Հաղթանակը կերտած զինվորի ու քաղաքացու սիրանքը, բայց կարող է Հաղթանակի լիարժեքության եւ Հաղթանակի ընկալման ու կիրառման վերաբերյալ շատ հարցեր առաջ բերել:

Ղարաբաղյան հաղթանակը հնարավոր դարձավ Հայաստանի յուրաքանչյուր քաղաքացու եւ հայ մարդու ջանքերի ու նվիրման գնով: Հնարավոր դարձավ մեր հերոսների կյանքի ու արյան գնով: Հնարավոր դարձավ ազգային արժանապատվության գիտակցման շնորհիվ: Հնարավոր դարձավ իրական եւ ոչ բարոյական հաղթանակի ձգտմամբ: Զինվորականն ու քաղաքացին արեցին իրենց գործը, բայց արդյո՞ք Հաղթանակն այսօր լիարժեք է:

Այսօր կարելի է նաև քաջություն ունենալ արձանագրելու, որ հաղթանակը Հաղթանակ կղառնա, երբ զինվորականների արյամբ եւ քաղաքացիական մաքամամբ ձեռք բերված հաղթանակին գունդարկի դիվանագետների հաղթանակը: Հայկական դիվանագիտությունը կարող է արձանագրել հաղթանակ, երբ վտանգված չլինի Հայաստանի Հանրապետության միջազգային հեղինակությունը: Մեր երկրի միջազգային հեղինակությունը կլինի պատշաճ մակարդակի, երբ Հայաստանի ներսում քաղաքական ուժերի իշխանատեւչությունն ու ամբարտավանությունը չանտեսեն ու չտունահարեն ազգային եւ պետական շահերը: Հաղթանակը լիարժեք կղառնա, երբ հասարակությունը սեփական երկրում իրական սոցիալական արդարություն տեսնի, եւ վաղվան նայի հավատով: Հաղթանակը լիարժեք կլինի, երբ հաղթանակած քաղաքացին արտագաղթելու ցանկություն ու կարիք չունենա եւ չարտագաղթելու կամք ունենա: Հաղթանակը կլինի լիարժեք, երբ թշնամուն բռնուցք ցույց տվածը, ներսում բռնուցք ցույց տալուց զերծ մնա, եւ ներսում «պայքար, պայքար մինչև վերջ» կարգախոս չլինի: Մենք բոլորս Մայիսի 9-ը վերարժեւորելու եւ հաղթանակը Հաղթանակի հասցնելու խնդիր ունենք այսօր:


Շնորհավորում ենք մեզ՝ բոլորիս, մեր Հաղթանակների օրվա կապակցությամբ՝ Մեծ հայրենականից մինչև Արցախ: Տա Աստված, որ իրար շնորհավորելիս մեզանից յուրաքանչյուրը գիտակցի, որ Հաղթանակը նաև իրենն է: Միգուցե այդ ժամանակ կհասկանանք մեր Հաղթանակների իրական իմաստը:



### ԻՐԱՎԱԿԱՆ ՏԵՍԱՆԿՅՈՒՆԻՑ ԿՈՍՍՎՈՆ ՈՒ ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐՎԱԲԱՐԸ ՄԻԵՎՆՈՒՅՆ ԻՐԱՎԻՃԱԿՈՒՄ ԵՆ

*Հարցազրույց Նեադոլում ՆԱՏՕ-ի համատեղ ուժերի հրամանատարության հաղափական խորհրդատուի գրասենյակի ավագ խորհրդական Ալեխսիա Վեդլեսի հետ*

Կոսովոն կարող է անկախ պետություն համարվել, ինչպես եւ Լեռնային Ղարաբաղը, քանի որ de facto (փաստացիորեն) անկախ միավորը կարող է պետություն համարվել, ինչը չի նշանակում, որ այլ պետություններ պարտավոր են ճանաչել այն, պարզապես ճանաչումը հնարավոր է, որովհետեւ այն պետություն է համարվում: \_\_\_\_\_ 4



### ԻՆՉՈ՞Ւ Է ԱՐԵՎՍՈՒՄՔԻ ՀԱՄԱՐ ԿՈՍՍՎՈՆ ԲԱՑԱՌԻԿ

Սերբիայի նախագահ Բոբո Տադիչը վերջին շրջանում նամակներ է ստանում՝ սպանության սպառնալիքներով: Նախագահին ուղղված վերջին նամակը ստացվել է հետադարձ հասցեի «Չիկագո» մակագրությամբ: Հեղինակը, ամենայն հավանականությամբ, սերբ է: «Դուք՝ դավաճաններ, նկատի ունեցեք, որ դավաճանությունը ժողովրդի եւ պետության դեմ իրականացված ծանրագույն հանցանք է, դա այն է, ինչ այժմ անում եք: Այդ իսկ պատճառով արդարադատությունը ամենախիստ պատիժը կիրականացնի ձեր նկատմամբ»,-նշված է անանուն նամակում: \_\_\_\_\_ 5

### ՈՒՂԵՐՉ



Արմենիա տպագիրը՝ առիթ է ունեցել անդրադառնալու «Խաղաղ Հայաստան» քաղաքացիական նախաձեռնությանը (05.04.2008թ. թիվ 10): Ֆորումի աշխատանքները եւս լուսաբանվել են մեր կողմից (12.04.2008թ. թիվ 11): Հիշեցնենք, որ Ֆորումի ժամանակ հիմք էր ընդունվել Ֆորումի ուղերձի նախագիծը եւ մասնակիցներին տրվել էր հնարավորություն՝ դիտողություններ եւ առաջարկություններ ներկայացնելու: Նախաձեռնության կազմակերպիչներն մեզ է տրամադրել ուղերձի վերջնական տարբերակը, որն էլ ներկայացնում ենք մեր ընթերցողներին: \_\_\_\_\_ 6



### «ՀՐԱԴԱԴԱՐԸ» ՆՈՐԻՑ ԿԲԵՄԱԴՐՎԻ

*Հարցազրույց ՀԹԳՄ նախագահ, Երևանի դասանի հանդիսատեսի ղեկավար Գեղարվեստական դեկլավար Հակոբ Ղազանչյանի հետ*

Այս հաղթանակը շատ ավելի կարելի է. Շուշիի ազատագրումով վճռվեց Արցախյան ազատամարտի ելքը. սա ազգային ազատագրական պայքարի հաղթանակն էր: Սա հզոր հաղթանակ է, եւ պետք է արժանին մատուցել այն մարդկանց, ովքեր հանուն այդ հաղթանակի կռվեցին եւ հաղթանակած պարզեցին հայի բռնուցքը: Այն մարդիկ, ովքեր երկնականաբար են, միշտ մեզ հետ են, իսկ ովքեր կենդանի են՝ փառք ու պատիվ նրանց: \_\_\_\_\_ 7





# ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

## ՔԱՂԱՔԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ԵՐԵՎԱՆՅԱՆ ԴՊՐՈՑԸ

### ՐԱՅՏԱՐԱՐՈՒՄ Ե ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅՈՒՆ

Եվրոպայի խորհրդի Քաղաքական դասընթացների երեւանյան դպրոցը (ՔԴԵԴ) ընդունում է հայտեր՝ 2008-2009 ուսումնական տարվա ընթացքում կազմակերպվելիք սեմինարների մասնակցելու համար: Կազմակերպվելու է մինչև մեկ շաբաթ տևողությամբ քաղաքագիտական տարբեր թեմաներով 3 սեմինար Գայաստանում (սեմինարները տեղի կունենան տարբեր ամիսներին) եւ մեկ սեմինար Ստրասբուրգում (Ֆրանսիա): Ստրասբուրգյան սեմինարին կիրառվեն ուսումնական գործընթացին անթերի եւ պարտաճանաչորեն մասնակցածները, որոնց եւ կտրվեն ՔԴԵԴ-ի շրջանավարտների վկայականներ: ՔԴԵԴ-ի նպատակն է օժանդակել երիտասարդ քաղաքական գործիչների իմացությունների ընդլայնմանը եւ քաղաքական ժողովրդավարական մշակույթի խորացմանը: ՔԴԵԴ-ը եվրոպական համանման դպրոցների հանրակցության անդամ է՝ բոլորին հավասար իրավունքներով:

ՔԴԵԴ կարող են դիմել խորհրդարանի անդամները, նախագահի, կառավարության եւ ԱԺ աշխատակազմերում, նախարարություններում, հասարակական կազմակերպություններում, դատաիրավական համակարգում, տարածքային եւ տեղական կառավարման մարմիններում, բանակում, ոստիկանությունում, տնտեսվարող սուբյեկտներում, ԱԺ-ում ներկայացված կուսակցություններում, նրանց երիտասարդական կառույցներում պատասխանատու դիրքեր զբաղեցնողները, քաղաքացիները, հայեցողական պաշտոն զբաղեցնողները, ինչպես նաեւ՝ լրագրողները, վերլուծաբանները:

#### Հայաստան մե՞տ է՝

1. ակտիվորեն մասնակցի երկրի քաղաքական կամ հասարակական կյանքին, անդամակցի որեւէ կուսակցության, հայտնի ՀԿ-ի կամ աշխատակցի լրատվամիջոցի: Մասնավոր անձանց մասնակցություն ՔԴԵԴ սեմինարներին չի նախատեսվում,
2. ունենա նվազագույնը 2 տարվա աշխատանքային ստաժ,
3. լինի մինչեւ 35 տարեկան: Ընտրվելիք մասնակիցների 25 տոկոսի չափով բացառություն կարվի մինչեւ 40 տարեկանների համար: Օտար լեզուների իմացությունը նախընտրելի է:

Քաղաքական դասընթացների երեւանյան դպրոցի կազմակերպվելիք սեմինարներին մասնակցել ցանկացողները **մե՞տ է մուսաւոր ներկայացնել**

1. դիմում (հատուկ ձեւ),
2. 2 լուսանկար,
3. ինքնակենսագրություն (CV),
4. շարադրանք «Ինչո՞ւ եմ ցանկանում սովորել ՔԴԵԴ-ում» թեմայով (մեկ տպագիր էջի սահմաններում),

5. երաշխավորագիր հայտատուին գործուղող կառույցի ղեկավարից առ այն, թե՛ ա. ինչո՞ւ է հայտատուին երաշխավորում ՔԴԵԴ սեմինարներին մասնակցելու համար: Որո՞նք են սպասելիքները,

բ. ինչո՞ւ է իր կազմակերպության նպատակներն ու ծրագրերը համընկնում ՔԴԵԴ-ի առաքելության հետ:

Երաշխավորող մարմինը պատասխանատվություն է կրում իր կողմից ՔԴԵԴ գործուղող հայտատուի համար: Երաշխավորողի կողմից հայտատուի երաշխավորագիրը ուժը կորցրած համարելու դեպքում հայտատուն այլեւս չի հրավիրվում ՔԴԵԴ սեմինարներին:

6. հավաստագիր աշխատավայրից, որ ՔԴԵԴ-ի կազմակերպելիք սեմինարների ընթացքում հայտատուն ազատ կլինի աշխատանքի գնալու պարտականությունից եւ կվճարվի այդ օրերի համար,

7. փաստաթուղթ (եր) վերջին 2 տարվա աշխատանքային ստաժի վերաբերյալ,

8. վկայական օտար լեզվի իմացության մասին (եթե կա):

Ինչպես նախաորակավորման, այնպես էլ հետագա փուլերում իրականությանը չհամապատասխանող տեղեկատվություններ կայացրածները կզրկվեն ՔԴԵԴ-ի աշխատանքներին մասնակցելու հնարավորությունից:

Հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչները, առկայության դեպքում, պետք է ներկայացնեն իրենց կազմակերպության վերջին 1 տարվա գործունեությանը վերաբերող հրապարակումներ:

Նախնական մրցույթի փուլը հաղթահարած թեկնածուներին կտրվի քննություններին մասնակցելու հնարավորություն:

Սեմինարի հրավիրված հայտատուն (կամ նրան երաշխավորած կառույցը) մասնակիորեն հոգում է հայտատուի մասնակցության հետ կապված ծախսերը՝ յուրաքանչյուր սեմինարի համար (եւ հայաստանյան, եւ ստրասբուրգյան) 35.000-ական դրամի չափով:

**Փաստաթղթային փաթեթը ներկայացնել անձամբ՝ անձնագրի առկայությամբ: Թերի ներկայացված դիմումները ենթակա չեն քննարկման: ՔԴԵԴ հանձնված փաստաթղթերը չեն վերադարձվում:**

**Դիմել՝ Խորենացու պող. 33, «Տաշիր» կենտրոնի 6-րդ՝ գրասենյակային հարկ, 31-րդ սենյակ: Դիմումներն ընդունվում են ամեն օր՝ բացի շաբաթ եւ կիրակի օրերից, ժամը 12:00-16:00: Դիմումների ընդունման վերջնամեկնուն է 2008 թվականի մայիսի 30-ը: Գրասենյակ՝ 51 11 71, Ինտերնետային էջ՝ [www.ymps.am](http://www.ymps.am)**

# ԿՈՍՎՈ. ՐԱՄԱՌՈՑ ՏԵՂԵԿԱՆՔ

Տարածք՝ 10.887 կ/կմ  
 Մայրաքաղաք՝ Պրիշտինա  
 Բնակչությունը՝ 2.473 միլիոն  
 Էթնիկ կազմը՝ ալբանացիներ – 88%, սերբեր – 7%, բոսնիացիներ, ռումինացիներ, բուլբեր, աշկալներ, եգիպտացիներ, գորաներ – 5%

Դավանանք՝ մաժամասամբ մահմեդականություն

«Կոսովո եւ Մետոխիա» անվանումը սերբերենից թարգմանաբար նշանակում է «սեւ կեռնեղների դաշտ եւ եկեղեցական հող»: Ալբաներենով եւ եվրոպական մի շարք լեզուներով ընդունված է օգտագործել կրճատ տարբերակը՝ Կոսովո:

Կոսովոյի եւ Մետոխիայի նկատմամբ սերբերի հավակնությունները պատմական հիմք ունեն, մինչդեռ ալբանացիները պնդում են, որ առաջնային է էթնիկ իրավունքը՝ միաժամանակ պատմականորեն հիմնավորելով իրենց հավակնությունները: Կավարկած, ըստ որի՝ ալբանացիների նախնիները թրակիացիներն են:

Հռոմի կայսրության պառակտումից հետո ժամանակակից Կոսովոյի տարածքը հայտնվում է Բյուզանդիայի կազմում: VI դ. վերջում Կոսովոն, ինչպես նաեւ Բալկանյան թերակղզու մեծ մասը, գաղութացվում է սլավոնների կողմից, որոնք ռոմանացված բնակիչներին մասամբ ուժացնում, մասամբ էլ վտարում են ափամերձ շրջաններ կամ լեռներ: Շուտով ժամանակակից Սերբիայի, ինչպես նաեւ Կոսովոյի տարածքում սլավոնական փոքրիկ իշխանություններ են ձեւավորվում: Կոսովոյի եւ Մետոխիայի տարածքում ձեւավորվում են միջնադարյան սերբական պետության հիմքերը: XIV դարից մինչեւ 1767 թվականն այստեղ էր գտնվում սերբ պատրիարքի նստավայրը (Պեչ ջաղաքի մոտ): Կոսովոն ամբողջությամբ Սերբիական թագավորության մաս է դարձել 1208թ.: Ֆեռոլալական պատերազմները, նաեւ Կոսովոյի տարածքում, զգալիորեն թուլկացնում են սերբական թագավորությունը՝ անպաշտպան դարձնելով այն Օսմանյան կայսրության վտանգի առջեւ: 1371 թ. պատերազմում սերբերի կրած պարտությունից հետո Մակեդոնիան եւ Հարավային Կոսովոն թուրքերի տիրապետության տակ են անցնում: Թուրքական տիրապետության

ընթացքում ալբանների մեծ մասը մահմեդականություն է ընդունում: XVII դարի վերջին ալբաններն աստիճանաբար սկսում են վերաբնակվել սերբերի կողմից լքված տարածքներում: XIX դարում Սերբիան անկախություն է ստանում Օսմանյան կայսրությունից: Կոսովոյի վերահսկողությունը Սերբիայի թագավորությանն է փոխանցվում 1912թ.՝ վեց տարի անց ընդգրկվելով նրա կազմում:

Երկրորդ աշխարհամարտի ավարտին Հարավսլավիայի Սոցիալիստական Դաշնային Հանրապետությունը (ՀՍԴՀ) փորձում է միավորվել Ալբանիայի հետ. համապատասխան առիթ ստեղծելու համար Բրոզ Տիտոն պատերազմի ժամանակ Հարավսլավիա տեղափոխված ալբանացիներին թույլատրում է բնակվել Կոսովոյում: Երկրամասի քաղաքական ճգնաժամը սկիզբ է առնում 1960-ական թթ.: Ըստ ՀՍԴՀ 1974թ. սահմանադրության՝ Կոսովոյի ինքնավար մարզը Սերբիային հավասար դաշնային սուբյեկտ էր համարվում:

1981թ. Կոսովոյում զանգվածային անկարգություններ են սկսվում, վերացվում է Կոսովոյի ինքնավարությունը: 1990թ. հուլիսի 2-ին երկրամասն իրեն անկախ է հռչակում: 1994թ. հանրաքվեում երկրամասի անկախությունը հավանության է արժանանում, նախագահ է ընտրվում Իբրահիմ Բուլգովան: 1996թ. կազմավորվում է Կոսովոյի ազատագրական բանակը: Երկու տարի անց էթնիկ հակամարտությունն արյունահեղ պատերազմի է վերածվում: Ավելի քան 200 հազար սերբեր հեռանում են երկրամասից: ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի թիվ 1244 բանաձեռով երկրամասում հաստատվում են Կոսովոյում ժամանակավոր վարչակազմի հարցերով ՄԱԿ-ի քաղաքացիական առաքելությունը եւ 16.5 հազար զինծառայողից կազմված, Կոսովոյի համար ձեւավորված ուժերը: ՄԱԿ-ի շրջանակներում Կոսովոյի ճգնաժամը հաղթահարելու ուղղությամբ ջանքեր է ձեռնարկում երկրամասում ՄԱԿ-ի Գլխավոր քարտուղարի հատուկ ներկայացուցիչ Մարթի Ինիարապրին, ում առաջարկած ծրագրով էլ Անխարավոր է դառնում Կոսովոյի անկախությունը:

**Տեղեկանքին առավել մանրամասն կարող ե՛ք ծանոթանալ [www.armedia.am](http://www.armedia.am) ինտերնետային էջում:**

# ՐԱՅԱՑՔ ԱՇԽԱՐԿԻՆ

Ֆրանսիայում բնակվող 200.000-400.000 անլեզու փախստականներն այժմ Ֆրանսիայի կառավարությունից պահանջում են իրենց աշխատանքի իրավունք սահմանող փաստաթուղթ տալ:

Փախստականներից շատերը վտանգում են իրենց անլեզու կեցությունն այդ երկրում՝ չվախենալով արտաքսումից: Շուրջ 600 փախստականներ, ովքեր տարիներ շարունակ անլեզու աշխատել են Ֆրանսիայի ռեստորաններում, շինարարական գործարաններում կամ մաքրման կետերում, հրաժարվում են «սեւ աշխատուժ»-ի կարգավիճակից եւ ցանկանում իրենց աշխատանքին համարժեք գումար ստանալ:

Ֆրանսիայի հայտնի ռեստորաններից մեկի տնօրենն իր ռեստորանը թողել է փախստականների տրամադրության տակ եւ պաշտպանում է վերջինների պահանջը: Ռեստորանի տնօրենի հավաստմամբ՝ Ֆրանսիայի նախագահ Նիկոլա Սարկոզին երբեմն հաճախում է իր ռեստորանը եւ համտեսում անլեզու փախստական խոհարարներից մեկի պատասխատու ուսեստները:

Այնուամենայնիվ չմոռանանք, որ համաձայն Ֆրանսիայի աշխատանքային օրենսգրքի՝ գործատուներին արգելվում է աշխատանքի ընդունել անլեզու փախստականների, հակառակ դեպքում՝ գործատուներին տուգանք, իսկ առանձին դեպքերում՝ նաեւ ազատազրկում է սպասվում:

Վանդալները պղծել են Բեռլինի Վայսենգեթ թաղամասում գտնվող հրեաների գերեզմանոցը:

Գերմանիայի ոստիկանության տվյալներով՝ հանցագործները, որոնց ինքնությունը դեռ պարզված չէ, գիշերը ներխուժել են գերեզմանոց եւ պղծել 23 գերեզմանաքար: Գերմանիայի խորհրդարանի անդամները դատապարտել են վանդալների այս գործողությունը եւ հայտարարել, որ մեղավորներն անպայման պետք է գտնվեն եւ պատասխանատվության ենթարկվեն:

«Ինձ տխրեցնում է այն փաստը, որ մարդիկ այսպիսի արարքի են ընդունակ: Եթե ինչ-որ մեկը հրեաների դեմ ինչ-որ բան ունի, թող գնա հրեաների համայնք եւ ասի դրա մասին: Գերեզմանոցն ավիրելն անե՛նավատ արարքն է, որ կարող է լինել», - հայտնել է Գերմանիայի քաղաքական գործիչներից մեկը:

Նշենք, որ Բեռլինի Վայսենգեթ թաղամասում գտնվող գերեզմանոցը հիմնվել է 1880 թվականին եւ ծառայում է որպես նացիզմի զոհ դարձած վեց միլիոն հրեաների հիշատակը հավերժացնող հուշարձան եւ խորհրդանիշ:

**Լուրերը ներկայացնում է «Եվրոպական ինտեգրացիա» ՀԿ-ն ԵԱԿԿ երեւանյան գրասենյակի աջակցությամբ**



ԻՆՉՈ՞Ւ Է ԱՐԵՎՄՈՒՏՔԻ ՇԱՄԱՐ ԿՈՍՏՎՈՆ ԲԱՅԱՌԻԿ

Սերբիայի նախագահ Բորիս Տադիչը վերջին շրջանում նամակներ է ստանում՝ սպառնալից սպառնալիքներով: Նախագահին ուղղված վերջին նամակը ստացվել է հետադարձ հասցեի «Չիկագո» մակագրությամբ: Չեղինակը, ամենայն հավանականությամբ, սերբ է: «Դուք՝ դավաճաններ, նկատի ունեցե՛ք, որ դավաճանությունը ժողովրդի եւ պետության դեմ իրականացված ծանրագույն հանցանք է, դա այն է, ինչ այժմ անում եք: Այդ իսկ պատճառով արդարադատությունը ամենախիստ պատիժը կիրականացնի ձեր նկատմամբ»,-նշված է անանուն նամակում: Ինչպես հայտնում են սերբական լրատվամիջոցները, փետրվարին Կոստվոյի անկախության հռչակումից հետո Բորիս Տադիչին ուղղված նամակ բովանդակությամբ ուղերձներ ավելի ու ավելի հաճախ են ստացվում:

Ամենայն հավանականությամբ, սերբ ազգայնականներին չեն կարող մխիթարել ճախագահի այն հավաստիացումները, թե Բելգրադը երբեք չի ճանաչի Կոստվոյի անկախությունը, հատկապես, երբ դրանք բավարար խստությամբ չեն հնչում:

«Իմ երկիրը երբեք չի ճանաչի Սերբիայի հարավային երկրամաս Կոստվոյի կողմից անկախության հռչակումը: Սակայն մենք կաջակցենք տարածաշրջանային բոլոր երկրներին՝ ԵՄ ինտեգրման ջանքերը: Միայն եվրոպական ինտեգրումը կարող է նպաստել տարածաշրջանի տնտեսական զարգացմանն ու կայունության ապահովմանը»,- մայիսի 3-ին հայտարարել է Բորիս Տադիչը Մակեդոնիայում կայացած տարածաշրջանային գագաթաժողովի ընթացքում:

Այնուամենայնիվ, նախկին սերբական երկրամասի անկախությունն արդեն ճանաչել է 40 երկիր, այդ թվում՝ ԵՄ 27 պետություններից 17-ը: Այդ հարցում առավել ակտիվորեն ընդդիմանում են Կոստվոյի նախադեպով մտահոգված Իսպանիան, Կիպրոսը, Ռումինիան:

Իսկապես, Եվրոպայում ազգային մի շարք շարժումների գոյության պայմաններում Բրյուսելի ջանքերով Կոստվոյի անկախացման գործընթացին զարմանալի է թվում: Հատկապես այն դեպքում, երբ 10.887 ք/կմ տարածքով այս երկրում, որն անհամեմատ փոքր է նույն Ուելսից, տնտեսագետների կարծիքով, իրական անկախություն դեռևս հնարավոր չէ: Կոստվոյում, որտեղ գործազրկությունը հասնում է 60%-ի, կենսամակարդակը Եվրոպայում առավել ցածրերից է, երկրամասի ՀՆԱ-ի 65%-ը կազմված է օտարերկրյա օգնությունից եւ դրամական փոխանցումներից, Կոստվոյի արտաքին առևտրի 70%-ը դեռևս ընթացում է Սերբիայի հետ:

Կոստվոյի անկախացմամբ Արեւմտյան դաշնակիցները (ինչպես Եվրոպան, այնպես էլ ԱՄՆ-ն) իրականացնում են ինչպես ընդհանուր, այնպես էլ անհատական մի շարք շահեր: Արեւմուտքի միասնական նպատակներից կարելի է ընդգծել ՆԱՏՕ-ի ընդլայնումը դեպի Արեւելք: Սերբական երկրամասի անկախացումը եւ դրա ճանաչումն Արեւմտյան

խանության փաստացի մարմինների հետ: Մինչ այդ՝ մարտի 6-ին, Մոսկվան չեղյալ էր հայտարարել Սուխումիի նկատմամբ առևտրատնտեսական պատժամիջոցները: Ինչպես, Ռուսաստանի այս քայլերը եւս բավարար էին ռուս-վրացական հարաբերություններն առավել սրելու եւ տարածաշրջանում Հյուսիսատլանտյան դաշինքի ներգրավումն



երկրների կողմից (ԱՄՆ, Ֆրանսիա, Գերմանիա, Մեծ Բրիտանիա) ընդգծեցին Ռուսաստանի անկարողությունն ազդեցություն ունենալ էթնիկ հակամարտությունների կարգավորման հարցում եւ միտված էին Մոսկվային ստիպել դիմել հակադարձ քայլի հարավկովկասյան ճակատում. օրինակ՝ ճանաչել Աբխազիայի եւ Հարավային Օսիայի ինքնահռչակ հանրապետությունները: Այս պարագայում Բրյուսելը հազիվ թե հանդես գար Թբիլիսիի պաշտպանությամբ, քանի որ չճանաչված այդ հանրապետությունների վերջնական (Ֆորմալ) անջատումը Վրաստանից, այդ երկրի տարածքը (ինչպես փաստացի, այնպես էլ արդեն իրավական) կազատեր ռուսական զինված ուժերի ներկայությունից՝ այն տրամադրելով Հյուսիսատլանտյան դաշինքին: Իսկ ՆԱՏՕ-ի՝ տարածաշրջանում հաստատվելու դեպքում, Հարավային Կովկասի մյուս երկրները ստիպված կլինեն հետեւել հյուսիսային հարեւանի օրինակին: Ուստի Կոստվոյի անկախության հռչակումից հետո Ռուսաստանը հայտնվեց բարդ երկընտրանքի առջեւ. երկրի միջազգային հեղինակությունը պահպանելու անհրաժեշտությունը ստիպում էր դիմել նմանօրինակ քայլի Հարավային Կովկասում, մինչդեռ Մոսկվան գիտակցում էր նաեւ արեւմտյան «պրովոկացիայի» հաշվարկը: Ըստ Կրեմլի՝ խնդրի միջանկյալ լուծում էր Սուխումիի եւ Ցխինվալիի հետ «հատուկ հարաբերություններ» հաստատելու որոշումը: Ապրիլի 16-ին Վլադիմիր Պուտինը կառավարությանը հանձնարարել էր «առարկայական օգնություն ցուցաբերել Աբխազիայում եւ Հարավային Օսիայում բնակվող ՌԴ քաղաքացիներին»: Այդ նպատակով Ռուսաստանի կառավարությունը պետք է համագործակցի նշված երկրամասերի իշ-

առավել իրատեսական դարձնելու համար:

Մյուս կողմից՝ վերլուծաբանները համակարծիք են, որ սերբական երկրամասի անկախացումը նոր «միկրոպետությունների» ժամանակաշրջանի նախագուշակն է. այն կարող է մի շարք տարածաշրջաններում ռազմական նոր գործողությունների սկիզբ դնել՝ նորանոր գավառների դրդելով «միկրոպետություններ» ձեւավորել իրենց տարածքներում: Իսկ այս հեռանկարն առավել մտահոգիչ է հենց Ռուսաստանի համար:

Անդրադառնալով Սպիտակ տան ծրագրերին՝ հարկ է նշել, որ Կոստվոն Սերբիայի կազմում պահպանելու հարցում Ռուսաստանի ջանքերի ձախողումը՝ դեպի Արեւմուտք, մասնավորապես ԵՄ է դրդում նույն Սերբիային, ինչը թերեւս առավել ձեռնտու է Վաշինգտոնին, քան Բրյուսելին (ԵՄ կազմում երկու դեռևս անհաշտ միավորների՝ Սերբիայի եւ Կոստվոյի գոյակցությունը անկայունության մթնոլորտ կարող է ստեղծել Եվրաընտանիքում՝ խոչընդոտելով կառույցի զարգացումը. (օրինակ՝ միասնական արտաքին քաղաքականության ձեւավորման հարցում) եւ պահելով ԵՄ-ն ԱՄՆ ազդեցության կամխատեսելի դաշտում):

Միացյալ Նահանգները, Կոստվոյում պաշտպանելով մահմեդական բնակչության՝ ալբանացիների շահերը, եւ «միկրոպետությունների» ճանաչման նախադեպ ստեղծելով՝ մյուս ինքնահռչակ հանրապետությունների համար «գայթակղիչ հեռանկար» են ստեղծում (նաեւ՝ Հյուսիսային Կիպրոսի): Նման «բարյացկամությունը» Թուրքիային կարող է ստիպել հարմարվել քրդական պետության ձեւավորման հետ, ինչն այդքան անհրաժեշտ է Վաշինգտոնին Մեծ Մերձավոր Արեւելքի կառուցման հարցում: Ինչ վերաբերում է Կոստվոյի

անկախացման հարցում ԵՄ շահագրգռվածությանը, ապա հովանավորելով դեպի Եվրոպական ընտանիք ձգտող Սերբիայի ալբանացիներին՝ Բրյուսելն այդպիսով ԵՄ ներսում ազգային շարժումների հետ համագործակցության նախադեպ է ստեղծել: Եվրաինտեգրման առավել բարձր մակարդակի ձգտող Ֆրանսիայի եւ Գերմանիայի ձեռքում դա կարող է լուրջ լծակ լինել՝ Բրյուսելի կենտրոնական իշխանությունն առավել ամրապնդելու համար: Կոստվոյի անկախությունը Փարիզին եւ Բեռլինին հնարավորություն կտա, հարկ եղած դեպքում, շահարկել ԵՄ առավել կենտրոնախույս երկրների ազգային անջատողական ձգտումները: Իսկ որ նման ձգտումներն այդ իրավիճակում հայտնված երկրին դարձնում են ավելի «Եվրոպամետ», կարելի է տեսնել Իտալիայի օրինակով:

Խորհրդարանական վերջին ընտրություններն Իտալիայում բացահայտեցին երկրի հյուսիսի բնակիչների աջակցությունն ազգայնական ուժերին: Ապրիլի 13-14-ը տեղի ունեցած քվեարկության արդյունքում ձայների 47.2%-ն ստացած աջակենտրոն դաշինքի կազմում էր նաեւ «Հյուսիսի լիգան», որը հանդես է գալիս երկրի առավել հարուստ հյուսիսային շրջանների անկախացման պահանջով:

Թեեւ Սիլվիո Բեռլուսկոնին ստիպված էր խորհրդարանական «պրոտֆեյնները» կիսել իր դաշինքի ազգայնական ներկայացուցիչների հետ նաեւ, այնուամենայնիվ վերջիններն անգիջում են: «Հյուսիսի Լիգայի» առաջնորդ Ումբերտո Բոսսին ապրիլի 29-ին լրագրողների հետ հանդիպման ժամանակ հայտարարել էր, թե նախանշված ներքաղաքական բարեփոխումները չիրականացվելու դեպքում Իտալիան քառսում կհայտնվի: «300 հազար մարդ ունենք՝ 300 հազար նահապետ, որ պատրաստ են պայքարել: Եվ մենք չենք կատակում... Խոսքը մեկի կամ երկուսի մասին չէ: Կարծում եք՝ խնդիրներ կունենանք մարտիկներ գտնելու հարցում: Նրանք կիջեն նաեւ լեռներից»,-հայտարարել էր ազգայնականների առաջնորդը: Սպառնալիքներին զուգահեռ՝ չէր կարելի չնկատել նաեւ արտաքին քաղաքական ուղեգծում Իտալիայի շրջադարձը: Ընտրություններից անմիջապես հետո Բեռլուսկոնին հայտարարել էր, թե մտադիր է աշխատել միջազգային ասպարեզում Եվրամիության ազդեցությունը վերականգնելու ուղղությամբ: «Արեւմտյան աշխարհում Եվրոպայի առաջատար դիրքերը վերականգնելու անհրաժեշտություն կա՝ վճռականորեն հաղթահարելու աշխարհի առջեւ ծառայած խնդիրները»,-հայտարարել էր Իտալիայի վարչապետը: Մինչդեռ կառավարման նախորդ տարիների ընթացքում (2001-2006թթ.) Սիլվիո Բեռլուսկոնին

բազմիցս մեղադրվել էր Իտալիան ԵՄ մյուս գործընկերներից մեկուսացնելու, ոչ եվրոպական պետություններ ԱՄՆ-ի, Ռուսաստանի, Իսրայելի հետ հարաբերությունները զարգացնելու համար: Թերեւս, Իտալիայի միասնականությունը պահպանելու հնարավորությունն այժմ Բեռլուսկոնին տեսնում է երկրի առավել «Եվրոպականացման» մեջ: Վերադառնալով Կոստվոյի անկախացմանը: ԵՄ-ի համար, որը շարունակում է բանակցություններն անդամակցության թեկնածու Թուրքիայի հետ, մահմեդաբնակ Կոստվոյի ներգրավումը քրիստոնեական սկզբունքներով ձեւավորված Եվրոպական համայնքում այդ սկզբունքների կենսունակության յուրօրինակ քննություն կլինի: Կոստվոյի ալբանացիների Եվրաինտեգրման փորձի հաջողությունը կամ ձախողումը Բրյուսելին կօգնեն առավել հեշտությամբ կողմնորոշվել ԵՄ-ին Թուրքիայի անդամակցության հարցում:

ՄԱԿ-ի ձեւաչափով Կոստվոյի կարգավիճակի շուրջ բանակցությունների վերջին փուլում՝ 2007թ. դեկտեմբերի 19-ին, Սերբիայի նախագահ Բորիս Տադիչն Իտալիայի արտգործնախարար Մասսիմո դ'Ալեմայի հետ գրույցում նշել է. «Ես չեմ կարող ռուսներից թույլ տալ առավել սերբ լինել, քան ինքս եմ»:

Եվ, իսկապես, Ռուսաստանի անհանգստությունը Կոստվոյի անկախացման հարցում երբեմն թվում է՝ ավելին է: Թեեւ Սերբիայի նախագահն իրավունք չունի չհայտարարել երկրամասի անկախության անթույլատրելիության մասին, այնուամենայնիվ Բորիս Տադիչն առաջարկում է տարանջատել Կոստվոյի եւ ԵՄ անդամակցության հարցերը, ինչն էլ վարչապետ Վոլսլավ Կոշտունիցայի հետ առճակատման հիմնական պատճառն է:

Ապրիլի 29-ին Լյուքսեմբուրգում Սերբիայի ու ԵՄ միջեւ «Կայունության եւ գործընկերության համաձայնագիր» է ստորագրվել, ինչը ԵՄ անդամակցության ճանապարհին Բելգրադի առաջին քայլն է: Թեեւ Եվրաինտեգրման առավելությունները սերբական առավել լիբերալ շրջանակներին ստիպում են հեշտությամբ հարմարվել ԵՄ-ի կազմում առաջիկայում բացի իրենց երկրից նաեւ Կոստվոյի ներկայությանը, այնուամենայնիվ Բրյուսելում խիստ մտահոգված են մայիսի 11-ին Սերբիայում նախանշված խորհրդարանական ընտրությունների արդյունքներով: Չնայած «Կայունության եւ գործընկերության համաձայնագրի» ստորագրումը միտված էր ամրապնդել սերբական արեւմտամետ ուժերի դիրքերը, բացառված չէ, որ այն ճիշտ հակառակ ազդեցությունն ունենա:



«ՇՐԱԴԱԴԱՐԸ» ՆՈՐԻՑ ԿԲԵՄԱԴՐԿԻ

-Կոլասմեֆ ինչի մասին է «Յրադադար»-ը:

«Յրադադար»-ը Արցախյան պատերազմի երկար սպասված եւ զինվորներին անակնկալի բերած հրադադարի մասին է: Պիեսուն հայ-



ՀԱԿՈԲ ՂԱԶԱՆՉՅԱՆ

ՀԹԳՄ նախագահ, Երևանի Պատանի հանդիսատեսի ղեկավար, գեղարվեստական ղեկավար, «Յրադադար» թիեսի բեմադրիչ

ադրբեջանական հարաբերություններն են, կա նաեւ հայ եւ ադրբեջանցի ամուսնական զույգ: Յրադադարից մեկ ժամ առաջ հայ զինվորները նկատում են, որ ազերիներից ինչ-որ մեկը գողտուկ մոտենում է մեր հեռակետերին: Մերոնք հարձակվում են նրա վրա եւ գերի վերցնում: Նա ոչինչ չի ասում, միայն արտասովոր է: Պարզվում է՝ կնոջ հետ փախուստի են դիմել: Երբ տեսել է, որ հայերից մեկը մոտենում է, օդ է կրակել՝ ուշադրությունն իր վրա սեւեռելու համար: Պատմում է, որ կինը հայ է եւ շուտով կծննդաբերի: Մերոնք որոշում են փրկել կնոջը եւ նրան բերում են խրամատ, որտեղ էլ նա ծննդաբերում է: Հայտարարվում է հրադադար: Հանդիպում են նաեւ միասին Աֆղանստանում կռված Գեւորգն ու Աննադը: Գեւորգը Աննայից տեղեկանում է, որ հրադադարից հետո դեռ հրետակոծություններ են լինելու: Այդ պահին արկն ընկնում է հայկական խրամատը. այս տեսնելով՝ հայ զինվորներից մեկը, ով մինչ այդ հանդիսատեսին ներկայացնում է որպես ամենադաժան եւ ազդեցիկ պերսոնաժ, պառկում է փոքրիկի վրա եւ մահանալով՝ փրկում նորածին երեխային:

-Այս ամիս տնում ենք Շուշիի ազատագրման արելիցը եւ Հաղթանակի տոնը, բայց ամսվա խաղացանկում «Յրադադարը» չկա, ինչո՞վ կբացատրեք այս փաստը:

-Թատրոնները կենդանի օրգանիզմներ են, եւ լինում են պահեր, երբ դերասանները ստիպված են լինում հեռանալ թատրոնից: Դա կապված է հազար ու մի խնդիրների հետ: Հիմնականում այսօր մեր դերասանները զբաղված են սերիալներում նկարահանվելով, այսինքն՝ գրաֆիկը չի համընկնում թատրոնի ընթացիկ խաղացանկի հետ: Այս պատճառով թատրոնը տարվա սկզբին կանգնեց շատ լուրջ խնդրի առաջ. մեր նորաթուխ «վայ» կինոռեժիսորներից մեկը որոշել է սերիալ նկարահանել քաղաքից դուրս: Իսկ թատրո-

նի դերասանները, ովքեր ստանում են շատ ցածր աշխատավարձ, ստիպված համաձայնում են նկարահանվել մամուստիպ սերիալներում եւ հեռանում են թատրոնից: Քանի որ «Յրադադարի» դերասաններից շատերը համաձայնել են նկարահանվել այդ սերիալում, հեռացել են քաղաքից եւ թատրոնի համար այլեւս ժամանակ չունեն, ես էլ որոշեցի չհարմարվել այդ իրավիճակին եւ ասացի, որ նրանք պետք է հեռանան թատրոնից: Սա է պատճառը, որ այս ներկայացումը ժամանակավորապես հանվել է խաղացանկից, բայց այն անպայման վերականգնվելու է:

Ինչ վերաբերում է Արցախին, ապա մեր թատրոնը ողջ հունիս ամսին իր ջանքերով եւ ֆինանսական ներուժով անվճար ցուցադրություններ կկազմակերպի Ղարաբաղում՝ Գանձասարում, Շուշիում եւ Ստեփանակերտում: Կարծում եմ՝ միայն տարելիցով չպիտի սահմանափակվենք, այլեւ մշտապես պիտի գիտակցենք եւ հավատանք մեր հաղթանակի գործընթացը:

-Ո՞րն էր բեմադրման նմանակը, երիտասարդներին ազգային գաղափարախոսությանը ավելի մոտ դարձնելը, թե՞...

-Այս պիեսի բեմադրությունն այն հերթական, փոքր կաթիլն է այն հսկայական պարտքի, որ արցախյան ազատամարտի հանդեպ կուտակել են մշակույթի գործիչները: Ես շատ ուրախ եմ, որ այս պիեսը կա, եւ որ այն բեմադրվում է պատանի հանդիսատեսի թատրոնում, որովհետեւ մեր հիմնական հանդիսականը՝ բարձր դասարանցիները, ուսանողները, պետք է հասկանան, թե վաղը ինչպիսին պետք է լինի իրենց քաղաքական դիրքորոշումը Արցախի խնդրի լուծման հարցում: Արցախյան ազատամարտն առիթ դարձավ՝ եւս մեկ անգամ խոսելու հունանիզմի մասին:

-Ի՞նչ արձագանքներ է ունեցել ներկայացումը, եւ հաճախելիությունն ինչպիսի՞ն է եղել: Դահլիճից նոր դուրս եկող երիտասարդների մոտ ինչ-որ փոփոխություն զգացե՞լ ե՞ք զգացական, գիտակցական, հոգեբանական առումներով, արդյո՞ք ընկալվում էր ներկայացման ասելիքը երիտասարդ հանդիսատեսի կողմից:

-Այո՛, ինչ-որ բան փոխվում էր, հատկապես երիտասարդության, ուսանողության մոտ: Ներկայացման մեջ կան բավական մուրթ տեսարաններ, որոնք ընկալելու համար գիտելիք է պետք, անձնական դիրքորոշումներ. անհատի ձեւավորումը շատ կարեւոր է, քանի որ տեսարաններն ինքնին հոգեբանական լուրջ խնդիրներ են ներկայացնում: Ներկայացումն ապրում է կյանքի ռիթմով, որտեղ շատ կարեւոր է նաեւ հայ զինվորի կերպարի բացահայտումն ու կերպարի խտացումը՝ որպես բարոյապես կայուն անձնավորություն: Կամք էր պետք. նախ գրել մամուստիպ գործ եւ հետո բեմադրել այդ պիեսը:

-Մեր կողմից անցկացված հարցախոյզի արդյունքում դարձ դարձավ, որ մեզնեք բեմադրում ներկա-

յացումներ գրեթե չեն բեմադրվում: Որդես ռեժիսոր եւ ՀԹԳՄ նախագահ՝ կարծում եմ, որ դա հանգրայն չկա՞, թե՞ անհույսություն է:

-Ո՛չ մեկը, ո՛չ մյուսը: Շուտ է դեռ: Շատ դժվար է մեզնեք գործ գրել եւ բեմադրել: Օրինակ՝ Հայրենական պատերազմի մասին ամենալավ ֆիլմերը նկարահանվեցին պատերազմից 40-50 տարի անց, որովհետեւ շատ դժվար է անկողմնակալ գրել մեզնեք պիես եւ այդպես էլ բեմադրել: Ինչո՞ւ. մասնակիցները կողքից են, իսկ այդ ամենը պետք է անցնի, դառնա պատմություն, ընկալումը խորքային եւ գիտակցական դառնա: Մինչ այժմ ստեղծված եւ բեմադրված պիեսները հայրենասիրություն քարոզող պիեսի փոխարեն են եղել, ինչը ճիշտ չէ: Պետք է գտնել «ճիշտ հեքիաթը»:

-Ձեր թատրոնի ներկայացումների տոների զննքն անենա՞ծանն են երևանում: Սա միտումնավոր արված է՞ք դրոշմակալներին, ուսանողներին թատրոն բերելու համար:

-Մեր հանդիսատեսների մեծ մասը դպրոցականներն ու ուսանողներն են, իսկ նրանք այնքան էլ վճարունակ չեն: Այս պահին տոների ինքնարժեքը մի քիչ թանկացել է, դարձել է 700 դրամ, բայց համեմատ մյուս թատրոնների, այն էժան է: Մենք գիտենք, որ դասարանը բազմաշերտ օրգանիզմ է. մի երեխա կարող է շատ վճարել, մյուսը՝ ընդհանրապես չվճարել: Եթե, օրինակ, դպրոցն ունենում է 2000 աշակերտ, մենք նրանց ենք տրամադրում 350 միավոր տոմս եւ հորդորում, որ պարտադրանք չլինի: Դպրոցներում միշտ ասում են, որ սոցիալապես անապահով աշակերտներին անվճար տոմսեր տրամադրեն եւ տարբերակումներ չդնեն: Այո՛, սա գիտակցված քայլ է. եթե բարձրագույն տոմսի ինքնարժեքը, սխալ կլինի հատկապես պատանիների համար, քանի որ նրանք կկտրվեն թատրոնի հետ շփումից:

-Եվ վերջում ի՞նչ կմաղթեք Հաղթանակի տոնի հեռ կադրված:

-Սա մեծ տոն է. շատերը դեռ չեն գիտակցում այս տոնի նշանակությունը: Ցավում եմ, որ մեր երիտասարդության շրջանում պատշաճ աշխատանք չի տարվում այս ուղղությամբ, որպեսզի Շուշիի ճակատամարտը դրվի Ավարայրի, Սարդարապատի կողքին: Այս հաղթանակը շատ ավելի կարեւոր է, որովհետեւ Շուշիի ազատագրումով վճռվեց Արցախյան ազատամարտի ելքը. սա ազգային ազատագրական պայքարի հաղթանակն էր: Սա հզոր հաղթանակ է, եւ պետք է արժանին մատուցել այն մարդկանց, ովքեր հանում այդ հաղթանակի կռվեցին եւ հաղթանակած պարզեցին հայի բռնկեցը: Այն մարդիկ, ովքեր երկնակամարում են, կարծում եմ՝ միշտ մեզ հետ են, իսկ ովքեր կենդանի են՝ փառք ու պատիվ նրանց: Սա լավ դաս է, որ այդ ապուշ տարածքային տարանջատման ռազմավարությունը՝ դարաբաղցի-հայաստանցի, վերանա մեր հասարակության միջից, եւ մեր հողում ապրենք խաղաղ ու երջանիկ:

Էդգար Ամիրխանյան

ԱՅՍ ՇԱԲԱԹ ԹԱՏՐՈՆՆԵՐՈՒՄ

Մենք այս խորագիրը հաճախ ենք ունեցել: Այս անգամ մեր նմանակը չէր սահմանափակվում ընթերցողին թատրոնների խաղացանկը ներկայացնելով եւ անուղղակիորեն թատրոն «հրավիրելով»: Ուզում էինք հասկանալ, թե մեր թատրոններն իրենց խաղացանկում որքանով են անդրադարձել Հաղթանակի օրվան: Սղասված դասերը դասկերացրած վաճից վաս է. անդրադարձ չկա: Կարծում ենք՝ չկա նաեւ մեկնաբանության կարիք:

ԱԳՈՒԼԻՍ ՄԱՆԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

մայիսի 10-«Հենզելն ու Գրետելը» 12.30, 14.00

ԳԱԲՐԻԵԼ ՍՈՒՆԴՈՒԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԱՎԱԴԵՄԻԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

մայիսի 9-«Էլի մեկ գոհ» 19.00  
մայիսի 11-«Պատվի համար» 19.00

ԴՐԱՄԱՏԻԿԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

մայիսի 9-«Սպանել սիրո համար» 19.00  
մայիսի 10-«Մոռանալ Հերոստրատին» 19.00  
մայիսի 11-«Ռոմեո եւ Ջուլիետ» 19.00  
մայիսի 14-«Մարդը փախ մեջ» 20.00

ԵՐԵՎԱՆԻ ԿԱՄԵՐԱՅԻՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

մայիսի 8-«Անուշ» 19.00  
մայիսի 10-«Սերոբիկ» 19.00  
մայիսի 13-«Անուշ» 19.00  
մայիսի 14-«Անուշ» 19.00

ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏԱՆԻ ՀԱՆԴԻՍԱՏԵՍԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

մայիսի 8-«Չիկարելիի արկածները» 13.00  
մայիսի 8-«Մնջախաղ» 19.00  
մայիսի 9-«Քեռի Մուլտիկինի կախարդական վրձիմը» 14.00  
մայիսի 10-«Անառակ որդու վերադարձը» 13.00  
մայիսի 11-«Ճառ ասենք, թե՞...» 15.00  
մայիսի 12-«Շուքն ու կատուն» 15.00  
մայիսի 13-«Անառակ որդու վերադարձը» 12.00  
մայիսի 14-«Անառակ որդու վերադարձը» 15.00

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՄԵՐԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ

մայիսի 11-«Շատ Love story» 19.00

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՀՐԱՉՅԱ ՂԱՓԼԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

մայիսի 10-«Շխոնց Սիիրան» 19.00

ԽԱՄԱԾԻԿԱՆ ԹԱՏՐՈՆ

մայիսի 10-«Կարմիր գլխարկը» 12.00, 14.00  
մայիսի 11-«Անխելը մարդը» 12.00, 14.00

ՀԱԿՈԲ ՊԱՐՈՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԵՐԱԺՇՏԱԿԱՆ ԿՈՄԵԴԻԱՅԻ ՊԵՏԱԿԱՆ ԹԱՏՐՈՆ

մայիսի 8-«Գնա մեռի, արի սիրեն» 19.00  
մայիսի 9-«Օպերետ, օպերետ» 19.00  
մայիսի 10-«Էսպես մինչեւ ե՞րբ» 19.00  
մայիսի 11-«Տարօրինակ միսիս Սելիջը» 19.00

ՀՈՎԻՏԱՆԵՍ ԹՈՒՄԱՆՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՏԻԿԵԿԱՅԻՆ ԹԱՏՐՈՆ

մայիսի 8-«Ակամա երաժիշտները» 12.00  
մայիսի 9-«Հենց են Հուլիան» 14.00  
մայիսի 10-«Ոսկե Չկնիկ» 12.00, 14.00, 16.00  
մայիսի 11-«Փոքրիկ Իդայի ծաղիկները» 12.00, 14.00, 16.00

# ՄԱՐԱՑԵԼ Է «ՇՈՒՄԻ ԲԱԼԱՍԱՆԻ» ԸՆԴՈՒՆԱԿԸ

Ապրիլի 28-ին Բագելի իր բնակարանում 102 տարեկանում սրտի կաթվածից վախճանվել է շվեյցարացի գիտնական Ալբերտ Յոհաննեսը՝ 20-րդ դարի ամենաազդեցիկ և ամենասարսափելի հայտնագործություններից մեկի հեղինակը:

1943թ. ապրիլի 22-ին գիտական աշխարհին առաջին անգամ տեղեկանում է հինգ տարի առաջ սինթեզի ենթարկված լիզերգինային թթվի դիտարկման պատճառով հատկությունների մասին: Հաջորդ տասնամյակների ընթացքում այդ նյութը վերածվում է արեւմտյան մշակույթի կարեւորագույն ֆենոմենի:

Լիզերգինային թթվի դիտարկման (նյութի պայմանական անվանումը՝ LSD) 1938թ. առաջին անգամ սինթեզել է շվեյցարացի կենսաքիմիկոս Ալբերտ Յոհաննեսը, ով աշխատում էր «Sandoz» (այժմ «Novartis») դեղագործական ընկերությունում: Նյութն ստացվել էր թուրքական սպորներում պարունակվող լիզերգինային թթվից: Սկզբում Յոհաննեսը LSD-ի որևէ առանձնահատկություն չի նկատում՝ հինգ տարով մոռանալով նրա մասին: 1943թ. ապրիլի 16-ին՝ համակված «տարօրինակ կանխագագացումով», գիտնականը կրկին սինթեզի է ենթարկում նյութը:

Փորձի ընթացքում Յոհաննեսը գլխապտույտ է ունենում: Ավարտելով աշխատանքը՝ վերադառնում է տուն, սակայն գլխապտույտը չի անցնում: Դրան միանում է շարժվելու և գործելու անդադրում, տարօրինակ մի ցանկություն: Երբ Յոհաննեսը փակում է աչքերը, նրա առջեւ զարմանահարաշատ տեսարաններ են բացվում: Ազդեցությունը շարունակվում է մոտավորապես երկու ժամ:

Յոհաննեսը եզրակացնում է, որ LSD-ի փոքրիկ չափաբաժին մաշկի միջոցով հայտնվել է իր օրգանիզմում: Համոզվելու համար 1943թ. ապրիլի 19-ին գիտնականը ընդունում է 250 միկրոգրամ այդ նյութից՝ փորձի մասին նախապես զգուշացնելով լաբորանտին:

Յոհաննեսի այս փորձը հայտնի է դարձել որպես առաջին «թթվային ճանփորդություն»: Գիտնականն ի վիճակի չէր հստակ խոսել, շարժվում էր դժվարությամբ, առարկաները նրան աղավաղված էին տարօրինակ գունավորությամբ էին երևում:

Մտահոգվելով իր առողջական վիճակի համար՝ Յոհաննեսը բժիշկ է կանչում: Վերջինը, զննելով նրան, արձանագրում է միայն մեկ շեղում՝ նորմալից՝ բերքի լայնացում: Մինչ այդ Յոհաննեսի մոտ միմյանց հաջորդում էին խուճապահին տագնապն ու բացարձակ երջանկության, էյֆորիայի զգացողությունները:

Չետագա հինգ տարիների ընթացքում «Sandoz» ընկերությունը LSD-ի միջոցով հոգեկան հիվանդությունների դեղորայքային բուժման մեթոդաբանություն է մշակում և դուրս գալիս ամերիկյան շուկա: Բժշկական ինստիտուտներում ուսանողները LSD էին ստանում այսպես ասած «ներսից» պատկերացնելու համար, թե ինչ է շիզոֆրենիան:

50-ականների վերջին մի խումբ «անանուն գինեմոլների» հետ աշխատող բժիշկ Հենրի Օսմոնը LSD-ի օգնությամբ կարճ ժամանակահատվածում նրանց մեծ մասին բուժում է ալկոհոլի նպատմամբ կործանիչ կապվածությունից: Հոլիվուդյան աստղ Քերի Գրանտը LSD-ի միջոցով «բուժվում է» արվամոլությունից: Թմրանյութերի գիտական հազարավոր աշխատություններ են մվիրվում, գիտական բազմաթիվ խորհրդածողվել են կազմակերպվում:

Սակայն LSD-ն գրեթե անմիջապես զուտ դեղորայքային միջոցից վերածվում է մշակութային ֆենոմենի:

Բրիտանացի գրող Օլդոս Հաքսլին, ով 1951 թվականից ընդունում էր այդ

նյութը, ստեղծում է «պսիխոդելիկա» հասկացությունը՝ պատրանքածին թմրադեղերի ազդեցությունը նկարագրելու համար: Ավելի ուշ այդպես էին անվանվում երաժշտության, գրականության և գեղարվեստի համապատասխան ուղղությունները: Հաքսլին իր «ճանփորդություններ» առաջին անգամ նկարագրում է «Ընկալման դռներ» գրքում, ի պատիվ որի՝ ավելի ուշ Ջիմ Մորրիսոնը (LSD-ի մեծ երկրպագու) իր խումբն անվանում է «The Doors»:

Նարկոմշակույթն իսկական «ծաղկում է ապրում» անհանգիստ 1960-ականներին: Տասնամյակի սկզբին Հարվարդի համալսարանի հոգեբան Թիմոթի Լիրին, վկայակոչելով իր փորձերի արդյունքները, պնդում էր, որ LSD-ի միջոցով կարելի է զգալիորեն նվազեցնել մարդկանց հանցավոր և հակասոցիալական վարքը (հետագա ստուգումներն ապացուցեցին, որ այս տվյալները խիստ չափազանցված, երբեմն էլ կեղծ են):

Հիպոսիների հակասոցիալական վարքը, հասարակական բարոյական նորմերի ժխտումը նյարդայնացում էին քաղաքացիների մեծ մասին: Բացի այդ՝ ի հայտ են գալիս LSD-ի մութ կողմը բացահայտող ուսումնասիրություններ. շատերի մոտ այն պսիխոզների և դեպրեսիայի պատճառ էր դառնում, գրեթե բոլորի մոտ ծանր հոգեբանական կախվածություն էր առաջացնում:

ԱՄՆ-ում, այնուհետև նաև մի շարք այլ երկրներում, հասարակական բողոքի ալիք է բարձրանում՝ LSD-ին արգելելու պահանջով: 1965 թվականից ԱՄՆ-ում թմրադեղի տարածման նկատմամբ խիստ վերահսկողություն է հաստատվում: Այն թույլատրվում էր օգտագործել միայն հետազոտական նպատակներով:

Սակայն «ճանփորդությունները» շարունակվում էին: Նման ակնարկներ նկատելի են The Beatles-ի շատ երգերում, որն այդ ընթացքում փառքի գագաթնակետին էր: Թեև «բիթլերը» հերքում են այդ կարծիքը, սակայն ենթադրվում է, որ «Lucy in the sky with diamonds» երգի վերնագրում քաղված է LSD հապավումը: Pink Floyd-ի առաջին երկու ալբոմներն ամբողջովին ներծածված են պսիխոդելիկայով, ինչը զարմանալի չէ. այն ժամանակ խմբի մենակատար Սիթ Բարրեթն «արդյունաբերական չափաբաժիններով» LSD էր օգտագործում:

Ալբերտ Յոհաննեսն այս ամենի հետ, իհարկե, առնչություն չունի: Նա շարունակում էր ուսումնասիրել բուսական ծագման հոգեմետ նյութերի թերապիտիկ հատկությունները: 1962թ. նա բացահայտում է սալվինորին-A-ն՝ եւս մեկ պատրանքածին (առավել թույլ, քան LSD-ն): Նա հավատում էր, որ իր հայտնագործությունները կարելի է եւ պետք է օգտագործել բժշկական նպատակներով:

1980թ.-ին Յոհաննեսը հրապարակում է «LSD-ն՝ իմ բարդ երեխան» գիրքը, որտեղ պնդում է, թե իր բացահայտած նյութը «բալասան է հոգու համար», իսկ նրա վատ հեղինակությունը քաղաքական շահարկումների արդյունք է:

1990-ական թթ.-ին Յոհաննեսը պատմաբաններ Ռոբերտ Ուոստոնի, Կառլ Ռուկի և Բլեյզ Սթեֆլիի հետ հեղինակում է «Ճանապարհ դեպի էլեւսին» գիրքը՝ նվիրված անտիկ միստիկ ծեսերում թմրանյութերի գործածմանը:

2007թ. «Synetics» ընկերության հարցախույզի ընթացքում բրիտանացիներն Ալբերտ Յոհաննեսին անվանել էին 21-րդ դարի մեծագույն հանճար:

**Նյութը ներկայացնում է «Եվրոպական ինստիտուտը» ՀԿ-ն ԵԱԿԿ ԵՐԵՎԱՆԻ զրատնային աջակցությամբ**

# ԶԻՆԱԿԱՆ ՊԱՐՄՊԻ ԳԱՂՏՆԻՔԸ

Տեղացիներն այս պարսպան անվանում են «Զինական պետության պատառիկներն իրար միացնող աստվածային թել»:



Տեղացիներն այս պարսպան անվանում են «Զինական պետության պատառիկներն իրար միացնող աստվածային թել»:

Մեծ չինական պարսպանը հսկայական է: Այն ժամանակվա ինքնաշարժ զինամեքենաների և զինատարաների համար անհնար էր հասնել այնտեղ:

Համարվում է, որ երկրի ողջ հյուսիսային սահմանի երկայնքով անցնող Զինական պարսպանը կառուցվել է թշնամիների ներխուժումից Զինաստանը պաշտպանելու համար, սակայն միշտ չէ, որ այն փրկել է երկիրը: Օրինակ՝ այս պարսպան արգելք չհանդիսացավ Զինգիս խանի փորձառու զորքի համար:

Այժմ որոշ գիտնականների կողմից վիճարկվում են Զինական պարսպանի շինարարության և նշանակության մասին ավանդական պատկերացումները: Նոր վարկածներ են առաջ քաշվում, որոնց համաձայն՝ այս հսկայական շինության ճարտարապետները եղել են ոչ թե չինացիները, այլ մեզ անհայտ քաղաքակրթության ներկայացուցիչներ: Հին չինական տեքստերում բազմաթիվ հիշատակումներ կան իմաստուն և մարդասեր «երկնքի որդիների» մասին (ավելի ուշ այսպես սկսեցին անվանել կայսրերին): Համաձայն իր

տեքստերի՝ առաջին «երկնքի որդու»՝ Խուանդիի ժամանելուց առաջ «հզոր կայծակի փայլատակումը գոտեւորեց Շերեփի (Մեծ արջի) համաստեղության Ծօգի աստղը»:

Խուանդիին, Առյուծի համաստեղությունից էր: Հարյուր տարի լինելով Զինաստանի տիրակալը՝ նա հոգնում է եւ «վերադառնում իր աստղը»:

Ռուս իմաստներ-էլեկտրոֆիզիկոս Վլադիմիր Կորոբեյնիկովը նշում է, որ այլ մոլորակներից եկվորներին և նրանց հաջորդներին հարկավոր էր գերհեռավոր միջազայնատիկական կապ ինչպես իրենց մոլորակի բնակիչների, այնպես էլ հնարանիս տիեզերքից է երևում: Մինչ այժմ Զինական պարսպան երկարության մասին գիտնականները վիճաբանում են՝ բերելով երկու թիվ՝ ավելի քան 4000 կմ և ավելի քան 5000 կմ: Այս պատի լայնությունն այնքան է, որ իրար կողքի հանգիստ կարող են անցնել հինգ ծիավոր:

Համարվում է, որ երկրի ողջ հյուսիսային սահմանի երկայնքով անցնող Զինական պարսպանը կառուցվել է թշնամիների ներխուժումից Զինաստանը պաշտպանելու համար, սակայն միշտ չէ, որ այն փրկել է երկիրը: Օրինակ՝ այս պարսպան արգելք չհանդիսացավ Զինգիս խանի փորձառու զորքի համար:

Պարսպան ավելի մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ նրա նախագծում գաղտնագրված են ճշտագույն մաթեմատիկական հաշվարկներ: «Զինական պարսպան անցնում է 30-րդ զուգահեռականով: Հայտնի է, որ հասարակածը երկրագունդը կի-

տում է երկու մասի, բայց ոչ հավասար: Դեպի հյուսիս ցամաքի մակերեսն ավելի մեծ է: Իսկ եթե տանենք երկրագունդը երկու հավասար մասերի բաժանող ենթադրվող հասարակածի գիծը, ապա այն կանցնի համարյա 30-րդ զուգահեռականով և այնքան էլ ուղիղ գիծ չի լինի: Այնքան այդ զիջագածե ենթադրվող հասարակածով է ձգվում Զինական պատը, իսկ եթե այն շարունակենք, ապա այն կանցնի նաև Գիզայի բուրգերով»,-նշում է գիտնականը:


Մեր մոլորակն ունի իր սեփական էլեկտրական լիցքը: Զինական պարսպանի տակ այն բաժանվում է երկու հավասար մասերի՝ դեպի հյուսիս և հարավ: Իր հերթին, երկրի լիցքի բաշխումն ակնաբարձորեն փոխում էր մոլորակից տիեզերք ճառագայթող ալիքի կառուցվածքը:

«Սա դեռևս գիտությանն անհայտ, ակնաբարձորեն կապի տրամսցնող և ցամաքային (սահմանից դուրս) համակարգերի սկզբունքն է,-ընդգծում է Կորոբեյնիկովը,-բայց որտեղից այս մասին գիտեին մեր թվարկությունից առաջ, եթե հիմա տեսական էլեկտրադինամիկան նոր է մոտեցել այսպիսի խնդիրների ըմբռնմանը»:

Միջազայնատիկական ընդունիչում եզիպատական բուրգերն էլ ռեզոնանտոր-անտենաների դեր են կատարում: Նրանք տիեզերքից տեղեկատվություն են ընդունում՝ «աշխատելով» երկրի և գալակտիկական ալիքների երկարությունների տարբերության վրա:

Վերջին տվյալներով՝ չինական կառավարությունը ձեռնամուխ է եղել Մեծ չինական պարսպանի վերականգնման աշխատանքներին:

Նաիրա Սիբյան



Լրատվական գործունեություն իրականացնող՝ «Արմեդիա» ՏԿԳ ՍՊԸ:  
Գրանցման վկայական՝ N 03U073426, տրված՝ 20.09.2006:  
Հասցեն՝ 0070 Երևան, Վարդանանց 28/2-34:  
Կայք՝ www.amedia.am, էլ-փոստ՝ info@amedia.am:  
Թերթի գլխավոր խմբագիր՝ Սոնա Մարտիրոսյան:  
Փոխտնօրեն և գովազդի պատասխանատու՝ Վերոնիկա Հակոբյան: Հեռ. (+374 10) 588 911:  
Թողարկման պատասխանատու՝ Հասմիկ Հովհաննիսյան:  
Սրբագրիչ՝ Լեւոն Խաչատրյան:  
Տպագրանակը՝ 1500:  
Գինը՝ 100 դրամ:  
“Armedia” Information, Analytical Agency  
Weekly “Armedia Tpagir”  
Տպագրվում է՝ «Նշանակ» ՍՊԸ  
Հասցե՝ ք. Երևան, Սարյան 38  
Հեռ. 518196